

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_ 2017 թվականի N \_\_\_-Ա

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրության 70-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

Համաձայնություն տալ «Երևանի Միութար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ձեռք բերել «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 90.5 տոկոս բաժնետոմսերը (152808 հատ սովորական (հասարակ) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1000 դրամ)՝ 2.5 մլրդ ՀՀ դրամով:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) գիտակրթական, հանրակացարանային, ուսումնական և կլինիկական նշանակության շենքային պայմանների ընդլայնում կիրականացնելի «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման և տվյալ բուժաստատության շենքային պայմանների բերավաճմանն ուղղված կապիտալ ներդրումների կատարման միջոցով:

«Avenue Consulting Group» կազմակերպության կողմից կատարվել է համապարփակ վերլուծություն և տրվել է ֆինանսական և իրավական հաշվետվություն փակ բաժնետիրական ընկերության ներկայիս ֆինանսական և իրավական պարտավորությունների մասին:

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հետ ստորագրվել է եռակողմ պայմանագիր փակ բաժնետիրական ընկերության գաղտնիությունը պահպանելու վերաբերյալ:

Համալսարանի և «Միքայելյան վերաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հիմնական բաժնետերերի հետ նախնական բանակցությունների արդյունքում նախատեսվում է ձեռք բերել տվյալ ընկերության կանոնադրական կապիտալի 90.5 տոկոս մասնաբաժինը մոտ 2.5 մլրդ ՀՀ դրամով:

Գործարքի արդյունքում ընկերությանը պատկանող 32,000 ք.մ ընդհանուր մակերեսով շենքերն ու շինությունները կանցնեն Համալսարանի տնօրինության տակ եւ մոտ 4 մլն. ԱՄՆ դոլար լրացուցիչ ներդրումների իրականացման պարագայում հնարավորություն կստեղծվի ունենալու լրացուցիչ 32,000 ք.մ ուսումնական, գիտական, կլինիկական և հանրակացարանային գործառույթների իրականացնելու համար արդի պայմաններ:

Այսպիսով, իրականացնելով մոտ 4.5-5 մլրդ. ՀՀ դրամ կապիտալ ներդրումներ, Համալսարանը կունենա մոտ 59,000 ք.մ «արտադրական» տարածքներ, ինչպես գիտակրթական գործունեության ընդլայնման, այնպես էլ համալսարանական հիվանդանոցների գործունեության ընդլայնման և զարգացման համար:

ՀՀ անկախության ձեռքբերումից ի վեր բարձրագույն բժշկական կրթության ոլորտում կատարվող վերափոխումները (բարձրագույն կրթության ոլորտի ազատականացում, մրցակցային դաշտի ստեղծում, բոլոնյան գործընթաց, օտարերկրյա սովորողների ներհոսք և այլն) և կրթության ժամանակակից բարձր չափանիշներին համապատասխանելու հրամայականը, ՀՀ-ում բարձրագույն բժշկական կրթության դարբնոց համարվող Համալսարանի համար նոր մարտահրավերներ են առաջացրել՝ դրանցից բխող նպատակներով և խնդիրներով:

Համալսարանի միջազգային ճանաչման, վարկանշավորման, օտարերկրյա բարձրագույն բժշկական կրթության լավագույն փորձը ներդնելու, համալսարանում ձևավորված ավանդույթները շարունակելու և զարգացնելու, ինչպես նաև առկա մարտահրավերներին դիմագրավելու նպատակով դեռևս 2017 թվականին Համալսարանի կողմից նախաձեռնվեց Համալսարանի հեռանկարային զարգացման ռազմավարության նախագծի մշակումը, որի ամփոփ, հիմնադրույթներ պարունակող տարբերակը 2017 թվականի սեպտեմբերի 26-ին ներկայացվեց և հավանության արժանացավ Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Ռազմավարության նախագծի հիմնադրույթներում սահմանվել են ստորև նախանշված նպատակները, որոնք առանցքային նշանակություն ունեն Համալսարանի ապագայի համար՝

1. 2016/2017 ուս. տարվա համեմատ 2021/2022 ուս. տարում 5 անգամ ավելացնել կրթական ծառայությունների արտահանումից ստացվող հասույթը՝ օտարերկրացի ուսանողների և կլինիկական օրդինատորների թվաքանակը 1607-ից հասցնելով 6900-ի:

2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեկ դրույքի միջին ամսական վարձատրությունը ավելացնել առնվազն 2.8 անգամ:

3. Գիտական գործունեությունից ստացվող հասույթները 2021/22 ուսումնական տարում հասցնել մինչև տարեկան 730 մլն. ՀՀ դրամի:

4. Աշխարհի առաջատար 3 վարկանշային կազմակերպություններից առնվազն մեկում ստանալ վարկանշում՝ առաջին 1000 համալսարանների ցանկում:

5. Համալսարանի հիվանդանոցային համալիրների JCI հավատարմագրում եւ առանձին կլինիկաներում IHC-ի պահանջներով ՊԿԳ (GCP) որակի կառավարման համակարգի ներդրում:

Այնուհետև, ելնելով ռազմավարական ծրագրի նախագծով նախատեսվող նպատակների իրագործման գործընթացի սկսման անհրաժեշտությունից, 2017 թվականի դեկտեմբերի 26-ին Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հավանության արժանացրեց «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ձեռքբերումը և որոշում կայացրեց գնել «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 90,5 տոկոսը (որոշումը կայացվել է վերապահումով՝ ՀՀ կառավարության կողմից ընկերության բաժնետոմսերի գնմանը համաձայնություն տալու պայմանով):

«Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումը պայմանավորված է վերոնշյալ նպատակների առավել արդյունավետ և սահուն իրականացումը ապահովելու անհրաժեշտությամբ, քանի որ Համալսարանի առկա ենթակառուցվածքները և ռեսուրսները բավարար չեն վերը նշված նպատակների պատշաճ իրագործման համար: Մասնավորապես՝

1. Օտարերկրացի ուսանողների և կլինիկական օրդինատորների մեծ ներհոսք ապահովելու համար այլևայլ պայմանների հետ մեկտեղ անհրաժեշտ են միջազգային պահանջներին համապատասխանող ուսումնական տարածքներ՝ լսարաններ, կլինիկական ամբիոններ, հանրակացարանային ընդլայնված տնտեսություն, մինչդեռ առկա ենթակառուցվածքները չեն բավարարում նույնիսկ սովորողների ներկա թվաքանակին:

Ավելին պետք է արձանագրել, որ կլինիկական ամբիոնների միայն 27 տոկոսն է գտնվում Համալսարանական կլինիկաներում, մնացած մասը գործում է մասնավոր և պետական ընկերություններ համարվող բժշկական հաստատություններում, ինչը չի թույլ տալիս բժշկական մասնագիտական գործունեության հեռանկարային զարգացումը համալսարանում:

2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 1 դրույքի համար միջին ամսական աշխատավարձը 2016-2017 թվականներին կազմել է ընդամենը 216,000 դրամ: Պրոֆեսորադասախոսական առավել որակյալ և հեղինակավոր անձնակազմի ձևավորումը և պահպանումը մեծապես պայմանավորված է նաև արժանապատիվ վարձատրությամբ, որը ներկա վիճակի պահպանման պարագայում հնարավոր չէ ապահովելով աճով:

3. Գիտական գործունեությունը, ուսումնական գործընթացին համընթաց պահանջում է լաբորատոր, հետազոտական ենթակառուցվածքների զարգացում, կլինիկական գործունեության (Good Clinical Practice) որակի համակարգի ներդրում, որը ևս պահանջում է կլինիկական ժամանակակից պահանջների համապատասխան տարածքների և սարքավորումների առկայություն, ինչի բացակայությունը արդեն իսկ զգացվում է Համալսարանում:

4. Չնայած Համալսարանն ունի ավանդույթներ և ձևավորված հեղինակություն, այդուհանդերձ, ընդգրկված չէ աշխարհի առաջատար 3 վարկանիշային կազմակերպությունների սահմանած վարկանշային ցուցակներում, որտեղ ընդգրկվելու չափանիշների (կրթական միջավայր, գիտահետազոտական աշխատանքներ, միջազգային գործունեություն, գիտելիքի փոխանցում և այլն) համար նախանշված նվազագույն ցուցանիշները ապահովելու համար Համալսարանի գործունեության, ներառյալ նրա ենթակառուցվածքները կազմող համակարգը էական բարեփոխման և ընդլայնման կարիք ունեն:

5. Հեղինակավոր JCI-ի (Joint Commission International) իրականացում է բժշկական հաստատությունների հավատարմագրում և սերտիֆիկացում, որը երաշխավորում է բժշկական հաստատությունում պացիենտների անվտանգությունը և տրամադրվող բժշկական ծառայությունների պատշաճ որակը: Համալսարանի կողմից նման հավատարմագրումը մեծ քայլ կլինի բժշկական ծառայությունների որակի կառավարման ոլորտում, որին, սակայն, հնարավոր է հասնել միայն JCI-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող կլինիկական տարածքների, որակավորված բուժանձնակազմի և սարքավորումների առկայության պայմաններում, ինչը Համալսարանի ներկա ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների պայմաններում ապահովել հնարավոր չէ:

Կատարված հաշվարկների և վերլուծությունների արդյունքում ներկայացված նպատակներին հասնելու գործիքներից մեկը դիտարկվում է բնականոն գործող, կլինիկական ենթակառուցվածքներ ունեցող, ինչպես նաև համալսարանական այլ գործունեության համար լրացուցիչ հնարավորությունների ունեցող ռեսուրսի ձեռքբերումը:

Այս առումով Համալսարանի բարեփոխմանն ուղղված քայլերը համընկան «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր

բաժնետոմսերի գերակշիռ մեծի վաճառքի առաջարկության հետ: Ուսումնասիրելով հնարավոր գործարքի շահավետությունը Համալսարանի համար, արձանագրվեց, որ հնարավոր է սահմանափակ ներդրումներով ապահովել նախատեսվող նպատակների իրագործման հնարավորություն:

Մասնավորապես, «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ձեռքբերման դեպքում՝ այն համալսարանական կարիքներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ կլինի շուրջ 4 միլիարդ 400 միլիոն դրամի ներդրում (2,5 միլիարդ դրամ՝ բաժնետոմսերի ձեռքբերման համար, 1 միլիարդ 940 միլիոն դրամ անհրաժեշտ վերանորոգման և զինման համար), ինչի արդյունքում կապահովվի կրթության որակի ապահովման միջազգային չափանիշներին համապատասխանող լրացուցիչ 32,000 քմ համալսարանական միջավայր՝ իր ուսումնական, գիտական, կլինիկական և կացարանային ենթակառուցվածքներով:

Համալսարանը անհրաժեշտ ներդրումները կատարելու համար նախատեսում է ներգրավել վարկային միջոցներ (անհրաժեշտ տվյալները կցում են):

Կարևոր է նշել, որ ընկերության պարտավորությունների կատարման մասով նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն (դրա պայմանները գործարքի կնքման պարագայում համապատասխանաբար կներառվեն բաժնետոմսերի գնման պայմանագրում), որ բաժնետոմսերի օտարման պահին ընկերության օտարման ենթակա բաժնետոմսերի բաժնետերերն ամբողջությամբ մարելու են ընկերության ընթացիկ պարտավորությունները եւ միայն, ընդհանուր առմամբ, մոտ 400,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի փոխառություն եւ վարկային միջոցներ են թողնելու ընկերության հաշվեկշռում, ստեղծվելու է առանձնացված հաշվեհամար, որի հաշվեկշռում բաժնետերերի կողմից ներդրվելու է 50,000,000-ի դրամի չափով գումար՝ հնարավոր ռիսկային պարտավորությունները՝ մասնավորապես արձակուրդային վճարներ վճարելու պարտավորություն առաջանալու դեպքում դրանք մարելու նպատակով:

Արդյունքում, ըստ հաշվարկների վրա հիմնված նախնական կանխատեսումների, «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ռազմավարական ծրագրով նախատեսված այլ միջոցառումների բարեհաջող իրականացման արդյունքում, 2016-2017 ուսումնական տարվա համեմատության Համալսարանի հասույթը 12.2 մլրդ ՀՀ դրամից 2021-2022 թվականներին կհասնի 26.6 մլրդ ՀՀ դրամի՝ ապահովվելով մոտ 2.2 անգամ աճ, որի հիմնական գործոնը կլինի կրթական ծառայությունների արտահանման ծավալների աճը՝ շուրջ 5 անգամ (2016/17 ուսումնական տարվա մոտ 3 մլրդ ՀՀ դրամ հասույթի դիմաց 2021/22 ուսումնական տարվա ավելի քան 16 մլրդ ՀՀ դրամ հասույթի ցուցանիշ):

Ստորև ներկայացվում է Համալսարանի գործունեության ֆինանսական արդյունքների մասին կանխատեսումները (հազար դրամ):<sup>1</sup>

---

<sup>1</sup> աղյուսակը վերցված է Համալսարանի 5-ամյա զարգացման ռազմավարական ծրագրի նախագծից:

	2015/16 վիսստ	2016/17 վիսստ	2017/18	2018/19	2019/20	2020/21	2021/22
<b>Ընդամենը Հասույթ</b>	<b>11,839,579</b>	<b>12,245,462</b>	<b>13,618,300</b>	<b>16,411,002</b>	<b>19,554,956</b>	<b>22,872,350</b>	<b>26,055,621</b>
<b>Կրթություն և գիտություն</b>	<b>7,368,864</b>	<b>7,959,165</b>	<b>9,213,946</b>	<b>11,656,849</b>	<b>14,441,943</b>	<b>17,512,806</b>	<b>20,612,998</b>
<b>Առողջապահություն</b>	<b>3,901,595</b>	<b>3,879,902</b>	<b>3,917,456</b>	<b>3,910,591</b>	<b>3,950,532</b>	<b>3,921,533</b>	<b>3,918,154</b>
<b>Հասույթ Այլ Գործունեությունից</b>	<b>569,120</b>	<b>406,395</b>	<b>486,898</b>	<b>843,562</b>	<b>1,162,481</b>	<b>1,438,011</b>	<b>1,524,468</b>
<b>Իրացման ինքնարժեք</b>	<b>7,085,440</b>	<b>6,821,865</b>	<b>8,236,568</b>	<b>10,201,698</b>	<b>11,365,050</b>	<b>13,052,165</b>	<b>14,605,849</b>
<b>Կրթություն և գիտություն</b>	<b>3,590,672</b>	<b>3,239,109</b>	<b>4,606,886</b>	<b>6,583,378</b>	<b>7,732,198</b>	<b>9,430,372</b>	<b>10,984,756</b>
<b>Առողջապահություն</b>	<b>3,494,768</b>	<b>3,582,756</b>	<b>3,629,682</b>	<b>3,618,321</b>	<b>3,632,853</b>	<b>3,621,793</b>	<b>3,621,093</b>
<b>Համախառն շահույթ</b>	<b>4,754,139</b>	<b>5,423,597</b>	<b>5,381,732</b>	<b>6,209,304</b>	<b>8,189,906</b>	<b>9,820,185</b>	<b>11,449,772</b>
<i>Համախառն շահույթ արժեքը</i>	<i>40.2%</i>	<i>44.3%</i>	<i>39.5%</i>	<i>37.8%</i>	<i>41.9%</i>	<i>42.9%</i>	<i>43.9%</i>
<b>Գործառնական ծախսեր</b>	<b>4,128,996</b>	<b>4,377,422</b>	<b>4,699,861</b>	<b>5,237,652</b>	<b>5,967,082</b>	<b>6,347,982</b>	<b>6,695,018</b>
<b>Շահույթ մինչև տոկոսների, հարկերի և մաշվածքի վճարումը</b>	<b>625,143</b>	<b>1,046,175</b>	<b>681,871</b>	<b>971,652</b>	<b>2,222,824</b>	<b>3,472,203</b>	<b>4,754,754</b>
<b>Գործող Հիմնական միջոցների մաշվածք</b>	<b>624,005</b>	<b>1,263,018</b>	<b>943,512</b>	<b>943,512</b>	<b>943,512</b>	<b>943,512</b>	<b>943,512</b>
<b>Նոր կառուցվող/ձեռքբերվող հիմնական միջոցների մաշվածք</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>9,700</b>	<b>6,037</b>	<b>48,102</b>	<b>333,981</b>	<b>333,981</b>
<b>Այլ գործառնական գործունեությունից եկամուտներ</b>	<b>748,699</b>	<b>833,544</b>	<b>633,605</b>	<b>633,605</b>	<b>633,605</b>	<b>633,605</b>	<b>633,605</b>
<b>Գործառնական շահույթ նախքան հարկումը եւ տոկոսների վճարումը</b>	<b>749,837</b>	<b>616,701</b>	<b>362,264</b>	<b>655,709</b>	<b>1,864,816</b>	<b>2,828,315</b>	<b>4,110,866</b>
<b>Ֆինանսական եկամուտներ՝ ներառյալ դրամաշեղծումները, հազ դր</b>	<b>113,688</b>	<b>106,321</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Մտացված դրամաշեղծումներ</b>	<b>110,300</b>	<b>106,321</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Այլ ֆինանսական եկամուտներ</b>	<b>3,388</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Ֆինանսական Ծախսեր</b>	<b>471,850</b>	<b>339,845</b>	<b>104,147</b>	<b>316,303</b>	<b>489,340</b>	<b>475,965</b>	<b>464,836</b>
<b>Ընդամենը տոկոսային ծախսեր</b>	<b>219,760</b>	<b>164,519</b>	<b>17,240</b>	<b>212,240</b>	<b>342,657</b>	<b>283,490</b>	<b>224,324</b>
Վարկի տոկոսային ծախսեր	219,760	164,519	-	195,000	325,417	266,250	207,083
Վարկային գծի տոկոսային ծախսեր			17,240	17,240	17,240	17,240	17,240
<b>Կուրսային տարբերություն</b>	<b>252,090</b>	<b>175,326</b>	<b>86,906</b>	<b>104,063</b>	<b>146,683</b>	<b>192,475</b>	<b>240,512</b>
<b>Շահույթ (Վնաս) մինչև շահութահարկով հառնումը</b>	<b>391,675</b>	<b>383,177</b>	<b>258,118</b>	<b>339,406</b>	<b>1,375,475</b>	<b>2,352,350</b>	<b>3,646,030</b>
<b>Շահութահարկի գծով ծախս/եկամուտ</b>	<b>171,180</b>	<b>193,777</b>	<b>206,199</b>	<b>248,485</b>	<b>275,095</b>	<b>470,470</b>	<b>729,206</b>
<b>Զուտ շահույթ/վնաս</b>	<b>220,495</b>	<b>189,400</b>	<b>51,918</b>	<b>90,921</b>	<b>1,100,380</b>	<b>1,881,880</b>	<b>2,916,824</b>

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ԱՄՓՈՓՈԹԵՐԹ**

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
 ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ  
 ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ  
 ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	Առաջարկում ենք կատարել «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող 90.5 տոկոս բաժնետոմսերի շուկայական գնահատում (եթե այն չի իրականացվել) և Նախագծին կից տեղեկանք-հիմնավորման մեջ ներկայացնել տեղեկատվություն ընկերության պարտավորությունների վերաբերյալ:	Երևանի «Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի պատվերով կատարվել է «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող շարժական և անշարժ գույքի գնահատում: Մասնավորապես շարժական գույքի գնահատում կատարվել է «Փորձագետների միություն» ՍՊԸ-ի կողմից, իսկ անշարժ գույքի գնահատում՝ «Գնահատողների միություն» ՓԲԸ-ի կողմից: Համաձայն ներկայացված գնահատման հաշվետվությունների՝ «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող շարժական գույքի լիկվիդացիոն արժեքը կազմել է 233,6 մլն ՀՀ դրամ, իսկ անշարժ գույքի լիկվիդացիոն արժեքը՝ 5,074,2 մլն ՀՀ դրամ: Ինչ վերաբերվում է պարտավորություններին,	



			<p>ապա Երևանի «Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը և այդ ընկերության համապարփակ վերլուծություն, ֆինանսական և իրավական հաշվետվություն իրականացրած «Ավենյու քընսալթինգ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կնքել են չբացահայտված տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության վերաբերյալ պայմանագիր, ուստի այդ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կամ դրա գրավոր համաձայնությամբ:</p> <p>Ընկերության պարտավորությունների կատարման մասով նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն ( դրա պայմանները գործարքի կնքման պարագայում համապատասխանաբար կներառվեն բաժնետոմսերի գնման պայմանագրում), որ բաժնետոմսերի օտարման պահին ընկերության օտարման ենթակա բաժնետոմսերի բաժնետերերն ամբողջությամբ մարելու են ընկերության ընթացիկ պարտավորությունները եւ միայն ընդհանուր առմամբ մոտ 400,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի</p>	
--	--	--	--	--

			<p>փոխառություն եւ վարկային միջոցներ են թողնելու ընկերության հաշվեկշռում. ստեղծվելու է առանձնացված հաշվեհամար, որի հաշվեկշռում բաժնետերերի կողմից ներդրվելու է 50,000,000-ի դրամի չափով գումար՝ հնարավոր ռիսկային պարտավորությունները՝ մասնավորապես արձակուրդային վճարներ վճարելու պարտավորություն առաջանալու դեպքում դրանք մարելու նպատակով:</p>	
2.	<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p>	<p>Նախագծին կից ներկայացնել համապարփակ վերլուծություն, որում կարտացոլվի մասնավորապես՝ կանխատեսվող եկամտաբերությունը, ներդրված գումարի վերադարձման ժամանակաշրջանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող միջոցառումներ, նոր ծառայությունների և ուղղությունների գծով նախատեսվող նորամուծություններ, կամ ծառայության որակի բարձրացմանը ուղղված նախատեսվող միջոցառումներ (հաճախորդների ներգրավման նպատակով), կանխատեսվող՝ պետպատվերի շրջանակներում իրականացվող ծառայության մատուցման արդյունքում ստացվող հասույթի հարաբերակցությունը ընդհանուր հասույթին, «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ներկա ֆինանսական խնդիրների ընդհանուր նկարագրությունը և պլանավորվող ժամանակաշրջանում խնդիրների լուծման ուղիները:</p>	<p>«Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության պարտավորությունների մասով՝ տես՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության դիտողությանն ի պատասխան ներկայացված եզրակացությունը:</p> <p>Այլ տեղեկությունների մասով առաջարկություններն ընդունվել են:</p>	<p>Նախագծին կից տեղեկանք-հիմնավորման մեջ կատարվել են համապատասխան լրացումներ:</p>
3.	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Առաջարկություններ և դիտողություններ չկան:</p>		

4.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>1. Նախագծով նախատեսվում է թույլատրել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ) ձեռք բերել «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալի 90.5 տոկոս բաժնետոմսերը՝ 2.5 մլրդ ՀՀ դրամով, մինչդեռ Նախագծի հիմնավորումներից պարզ չէ, թե ինչ աղբյուրներից է Հիմնադրամը նախատեսում վճարել Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց: Ընդ որում լրացուցիչ պարզաբանման կարիք ունի, թե ինչու է Հիմնադրամը ցանկանում ձեռք բերել Ընկերության կանոնադրական կապիտալի 90.5 տոկոս բաժնետոմսերը, քանի որ Նախագծին կցված Հիմնադրամի ռեկտորի գրության մեջ, որպես հիմնավորում նշվում է Ընկերության բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի ձեռք բերում: Միաժամանակ Նախագծի հիմնավորումների համաձայն, Նախագծի նպատակը Ընկերությանը պատկանող շենքերի ու շինությունների ձեռքբերումն է, մինչդեռ շենքերի ու շինությունների փոխարեն Նախագծով նախատեսվում է ձեռք բերել Ընկերության բաժնետոմսերը, որը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:</p>	<p>1. Բաժնետոմսերի ձեռքբերման համար նախատեսվում է ներգրավել վարկային միջոցներ (լրացուցիչ տեղեկատվությունը կցվում է):</p> <p>Ընկերության կանոնադրության համաձայն, բաժնետերերի ընդհանուր ժողովը ձայների 3/4-ով միայն կարող է ընդունել այնպիսի կարևոր որոշումներ, ինչպես կանոնադրության փոփոխությունների, լրացումների, ընկերության վերակազմակերպման, լուծարման, գույքի օտարման մասին և այլ որոշումներ: Ընկերության 90,5 տոկոս բաժնետոմսերի սեփականատերերը ցանկություն են հայտնել միաժամանակ և Հիմնադրամի համար շահավետ պայմաններով օտարել բաժնետոմսերը, ուստի նպատակահարմար է համարվում ձեռքբերել բաժնետոմսերի հենց այդ քանակությունը: Համալսարանի հետ կատարված լրացուցիչ ճշգրտման արդյունքում պրազվել է, որ խոսքը վերաբերում է բաժնետոմսերի 90,5 տոկոսի ձեռքբերմանը:</p> <p>Տեղեկացնենք, որ ընկերությունը գործող բժշկական կազմակերպություն է, ուստի, Հիմնադրամի համար առավել շահավետ է բաժնետոմսերի (գործող բժշկական հաստատության), այլ ոչ թե շենք շինությունների ձեռքբերումը, քանի որ այն հնարավորություն կտա արագորեն ընդլայնել Համալսարանի կլինիկական</p>	
----	-------------------------------------	---	--	--

		<p>2. ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1407-Ն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրության 70-րդ կետի համաձայն, Հիմնադրամի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսը գերազանցող գործարքները կնքվում են ՀՀ կառավարության համաձայնությամբ, մինչդեռ Նախագծի հիմնավորումներից պարզ չէ, թե որքան է կազմում Հիմնադրամի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքը:</p> <p>3. Հաշվի առնելով, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1407-Ն որոշմամբ, միաժամանակ օրենսդրական տեխնիկայի ապահովման նպատակով՝ անհրաժեշտ է Նախագծի նախաբանում հղում կատարել նշված որոշման համապատասխան կետին:</p> <p>4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրության 70-րդ կետը, համաձայն որի՝ Համալսարանի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսը գերազանցող գործարքները կնքվում են Հայաստանի Հանրապետության</p>	<p>գործունեությունը, ստեղծել կից ներկայացված տեղեկանք-հիմնավորումում նշված ուսումնական, կացարանային ենթակառուցվածքները:</p> <p>2.ԵՊԲՀ-ի ընդհանուր ակտիվները հաշվետու ժամանակահատվածի սկզբի դրությամբ կազմել են 7,509.162 հազար ՀՀ դրամ:</p> <p>3.Ընդունվել է:</p> <p>4.Ընդունվել է:</p>	<p>3.Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>4.Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
--	--	---	---	---

		կառավարության համաձայնությամբ՝ առաջարկում ենք Նախագծի վերնագրում և տեքստում «թույլտվություն» և «Թույլատրել» բառերը համապատասխանաբար փոխարինել «համաձայնություն» և «Համաձայնություն տալ» բառերով:		
5.	ՀՀ արդարադատության նախարարություն	««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին «Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող բաժնետոմսերը ձեռք բերելու համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:		